

ԿԱԴՐԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2007 թվականի առաջին կիսամյակում կատարված կադրային աշխատանքների հաշվետվություն

**2007թ. առաջին կիսամյակում ՀՀ ԱՎԾ աշխատակազմում
աշխատանքի է ընդունվել 17մարդ, որից՝**

քաղաքացիական ծառայության պաշտոններում -13

քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոններում -3

ծառայության նախագահի գրասենյակում -1

աշխատանքից ազատվել է 21 մարդ, որից՝

քաղաքացիական ծառայողներ -14

քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնի

նշանակվածներ -7

Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնները համալրելու համար ՀՀ ԱՎԾ աշխատակազմը անցկացրել է 13 մրցույթ, իսկ քաղաքացիական ծառայության խորհրդի աշխատակազմը՝ 1 մրցույթ, որը համարվել է չկայացած՝ դիմումներ չներկայացվելու պատճառով:

«Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ՀՀ ԱՎԾ նախագահի հրամանով առավելագույն՝ ՀՀ քաղաքացիական ծառայության առաջին դասի խորհրդականի դասային աստիճաններ են շնորհվել երկրորդ ենթախմբի գլխավոր պաշտոններ զբաղեցնող 6 քաղաքացիական ծառայողի, իսկ աշխատակազմի ղեկավարի կողմից համապատասխան դասային աստիճաններ են շնորհվել առաջատար և կրտսեր պաշտոններ զբաղեցնող 12 քաղաքացիական ծառայողի:

Վերապատրաստվել և ատեստավորվել են հետևյալ թվաքանակով քաղաքացիական ծառայողներ.

	Գլխավոր պաշտոններ	Առաջատար պաշտոններ	Կրտսեր պաշտոններ
Վերապատրաստվել են	18	34	35
Ատեստավորվել են , որից`	21	35	16
փաստաթղթային եղանակով	4	-	-
Ատեստավորման արդյունքում չեն համապատասխանել գրադեցրած պաշտոնին	1	-	-

Ուսումնական և արտադրական պրակտիկա է կազմակերպվել Երևանի պետական տնտեսագիտական համալսարանի, Երևանի պետական համալսարանի, ՀՀ պետական կառավարման ակադեմիայի, Մոսկվայի սերվիսի պետական համալսարանի, Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջի թվով 128 ուսանողների համար:

ԱՊՀ վիճակագրական ծառայության կազմավորման 15-ամյակի կապակցությամբ, ներդրած ավանդի համար ԱՊՀ մասնակից երկրների վիճակագրական ծառայությունների ղեկավարների խորհրդի 2007թվականի փետրվարի 6-ի որոշմամբ 5 աշխատակից, իսկ ՀՀ ԱՎԾ նախագահի և աշխատակազմի ղեկավարի հրամաններով 2 աշխատակից խրախուսվել են շնորհակալագրերով :